Ես ականատես եմ եղել, թե ինչպես մի մարդ ծնկաչոք համբուրում էր Երեւանի կայարանի կառամատույցի սալաքարը, որ իրեն Բաքուից բերել էր գնացքը: Իսկ հետո ի՞նչ եղավ: Հետո եղան կենցաղային դժվարություններ, Հայաստանի հեռուստաերգչյան կիսամաղց կյանքը խղճուկ օրաթերթով, որը բաց էր բողնվում ծիրային խարտերով: Բայց համոզված եմ, որ անաղմա եւ ծանր կյանքին հարմարվելու այս բոլոր ակնհայտ դժվարությունները ոչինչ են մարդկության վաստակաղույն բնազդներին վախին եւ հույսին հաղորդակցվելու անհրաժեշտության հանձնառությամբ, կատեգորիաներ, որոնք կանխորոշել էին խորհրդային աղբիւակերոյի էությունն ա բնույթը:

— 1955 թ. ամռանը (դա Մոսկվայում էր) ինձ զանգահարեց Նվարդ Տերյանը եւ ասաց, որ ուզում է ինձ այցելել ինչ որ «հետաքրքիր մարդու» հետ: Պարզվեց, որ դա իմ վաղեմի ծանոթն է, որին ես ճանաչում էի որպես Երեւանի դեհեռամատուցանի անցյալների դասախոսի: Չեռը մեկնելով նա առաջ հիշեցրեց իր մասին. «Սխոյար Մախուլով»:

Ժամանակին նա հայրենադարձվել էր, երբ չեմ սխալվում, Սիրիայից: Պետհամալսարանի դասախոսների միջավայրում, որը դյուցազնության տարիներին լցվել էր զանազան մարդկանցով, նա առանձնանում էր ջենջենական կեցվածքով, կոկիկությամբ եւ այլի զարմող անգլիասիրությամբ: Մինչդեռ այժմ իմ աչքն հառնեց դեռ երեկվա վոխկի հանն ու հոգը դյուցազնած կալանավոր, որն ազատորեն եւ զարմանքով դիտում էր հեռուստացույցը, որը կյանքում առաջին անգամ էր տեսնում: Ինչպես այն ժամանակ էին ասում, դա «վաղ իրուշչովյան հանձնարման» ժամանակաշրջանն էր («աբ հանձնարումը» կատարվում են 50-ական թթ. վերջերի հետ): Ամռան այդ ամիսներին Մոսկվայում նոր

ՎԱՍԻԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Հունաստանում «թուրք փոքրամասնության իրավունքների ոտնահարման մասին» Թուրքիայում բարձրացված աղմուկը, որից անմասն չմնացին այդ պետության ղեկավարը, վարչապետն ու արտգործնախարարը, միջազգային հաղորդական նախաբեմ դուրս բերվեց երկրի ներքին տնտեսական ու ռազմաքաղաքական դրոթկումների դայմաններում:

1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի դայմանագիրը հույն-թուրքական հաշվարկում բողել էր մի մնացորդ: Ինչո՞ւ վարվել մի կողմից այդ փոքրամասնությունը բնութագրեցին մահմեդական:

Պայմանագիրն այսպիսով սահմանում էր, որ Հունաստանում թուրքական փոքրամասնություն չկա, այլ կան մահմեդական կրոնին դատկանող հունական հաղորդացիներ: «70 տարի հետո, ասում է Թուրքիայի մամլի նախարար Յըլդըրըմ Աքբունան, նման սահմանումը չի կարող ուժի մեջ լինել»:

Այսօր էլ Արևմտյան Թրակիայի մարզի Քսանթի, Ռոդոպի եւ Էվրոս նահանգներում Շամադասասխանաբար Քսանթի, Ռոդոպի եւ Ալեքսանդրուպոլիս կենտրոններով) ապրող հունական հաղորդացի-մահմեդականները բաժանված են երեք կատեգորիաների՝ թուրքեր, դոմակներ եւ գնչուներ: 1981 թ. մարդահամարի տվյալներով մարզում ապրել են 120000 մահմեդականներ, որոնց 45 տոկոսը թուրքախոսներ են, 36 տոկոսը դոմակներ եւ 18 տոկոսը գնչուներ: Հունաստանի արտգործնախարարության վերջերս հրատարակած տվյալներով, այժմ Թուրքիայում ապրող հույների թիվը կազմում է լոկ 3.5 հազար մարդ:

Թուրքական ծագմամբ հաղորդացիների մի մասը «նորարարներ են, որոնք կողմնորոշվել են դեպի բեմական բարեփոխումները, իսկ մեծ մասը հին մահմեդականներ են, որոնք ընդունում են հին ավանդույթները: Նրանք հիմնականում գյուղացիներ են, իսկ հաղորդներում կան նաեւ արհեստավորներ ու բանվորներ:

Դոմակների ծագումն անորոշ է: Թուրքերը պնդում են, որ նրանք թուրքական հին ասպատակող ցեղերի մնացուկներ են, որոնք այստեղ հաստատվել են դեռեւս բյուզանդական ժամանակաշրջանի զարգացման տարիներին: Բուլգարները ասում են, որ դոմակները իրենց բոնի մահմեդականացված ազգակիցներն են: Հավանաբար նրանք Բուլղարիայի եւ Հունաստանի սահմանագծի Ռոդոպի լեռնազանգվածի բնիկներ են, որոնք մահմեդականացվել են ռոմանյան կայսրության տարիներին, խոսում են բուլղարերենի եւ թուրքերենի լեզվական տարբեր դարձակող մի բարբառով: Նրանց բնակության կենտրոնն են համարվում Քսանթիի նահանգի լեռնային գյուղերը, բայց կան նաեւ հաղորդներում հաստատվածներ: Դոմակների մեծ մասը հավատարիմ է հին մահմեդական ավանդույթներին ու երբեմն չի ընդունում իր թուրքական դատկանելությունը:

Մահմեդական գնչուները համարյա հավատարդես բաժանված են Արեւմտյան Թրակիայի երեք նահանգներում:

Արեւմտաթրակիական մահմեդականների մասին թուրքական դահանջները հրապարակվել են 1964 թվից, այսինքն Սամբոլի արյունալի իրադարձություններից հետո, երբ իրագործվեց հույն հաղորդացիների զանգվածային արտաքսումը, որով եւ խախտվեց երկու երկրների փոքրամասնությունների համամասնությունը: Դա լուծ էության ծրագրված մի արշավ էր հույների նկատմամբ, որն ավելի սասդիացավ 1974 թվին Կիպրոսում իրագործված նեռխամժումից հետո:

Անկարան հանգական հողում ունի իր ծրագրերը. Դրանք են.

ա) թուրքացնել Արեւմտյան Թրակիայի տարբեր ազգության մահմեդականներին,

բ) վերջիններ մեջ արմատավորել հույների նկատմամբ կասկած եւ անվստահություն,

գ) բորբոքել «ատելացվածի» հոգեբանություն,

դ) ձգտել մարզի «ինքնավարացմանը» եւ անջատմանը,

ե) միջազգային կազմակերպություններում ձգտել Հունաստանի վարկաբեկմանը, մանավանդ այժմ, երբ Անկարայի վրա է կենտրոնացված համաշխարհային հասարակայնության «կրակը» երկրում մարդու իրավունքների ապաղակող խախտումների համար, եւ այլն:

Վերոհիշյալ հաղորդական կուրսը բմբկահարում են «Արեւմտյան Թրակիայի հեռ համերաշխության միությունը» (Սամբոլ), Արեւմտյան Թրակիայի նախկին բնակիչների միությունները (հատկապես Գերմանիայում) եւ համաթուրքական հարոչությամբ հայտնի դարբերականները, որոնք անարգել տարածվում են մարզում:

Յուրահատուկ «հաղորդական» դեր են սանձնել Արեւմտյան Թրակիայում գործող թուրք ծայրահեղականների բջիջները, որոնք դոմակներին եւ գնչուներին փորձում են սփոփել, որ նրանք լսեն իրենց ազգային դատկանելության մասին:

Տասնյակ տարիներով հրահրելով եւ մահմեդական հույն հաղորդացիները բարեկամաբար գոյակցել են: Նրանք հանգամանք են հայտնում, որ դեռ է ադրեն ու բարգավաճեն իրենց մշակած հողերի վրա, ասի փոխըմբռնման եւ համաձեռ աշխատելու ավանդույթներ են սնեցել տարեցներով, այլ մեքենաներով ու ժամանակակից տեխնիկայով:

Կոմոտինիում խանութների, արհեստանոցների մեծ մասը մահմեդականներին են դատկանում: Վերջիններն օգտվում են տոցիալական աղաահովության համակարգից, լրացուցիչ գումարներ են ստանում ծխախոտագործությունից, դահդանում են իրենց ավանդույթները, ազատ դավանում են իրենց կրոնը, անարգել խոսում իրենց լեզվով:

Մյուս կողմից, հաղորդի կազմակերդվում են թուրքերի ցույցեր, դասակներ եւ բողոքի այլ միջոցառումներ: Մայրենի լեզվով հրատարակվող դարբերական մամուլում տրվում են հակահունական հոդվածներ, գիտնականները Եվրախորհրդարան են դարակում բողոքագրեր, միջազգային գիտաժողովներում փորձում են հեղինակազրկել Հունաստանը:

Այդ «ոտնահարված» փոքրամասնության թիվը տարեցտարի աճում է: Ահա թե որքան են «ենթադրյալ» եւ իսկական ճնշումների տարբերությունները:

Հունաստանում «թուրքական» փոքրամասնության հանդեղ հայաբնակների մասին անհիմն մեղադրանքները, դաղտնալիքները, տարածքային ջրերի, անմարդաբնակ ու բնակեցված կղզիների դատկանելության մասին ճամարտակությունները, ՄԱԿ-ի անդամ Կիպրոսի հողի գրավումը եւ նրա հաղորդացիների սդանությունները, աջ ու ձախ բնամիներ որոնցը Թուրքիայի ներքին դրդդեմներն արտահանելու հատահաս փորձեր են, որոնց արդյունքում այդ երկրում հաղորդակրթությունն ու դեմոկրատիան երկար տարիներով հետ են մղվում: Լարվածության եւ աղակայունացման ստրատեգիայի ուղին «միջազգային դերբերի» ուղի է: Դա վտանգավոր հետամնացություն է:

Սվինը այն ճոճողին ոչ մի լավ բան չի խոստանում, հանգի, ինչպես ասում են, նրանով շատ բան կարելի է անել, բայց նրա վրա նստել չի կարելի:

ՀՈՒԹԱՐՅԱՆ ՊԱՇԱՐՈՍՅԱՆ

ՄՐԵՎՄՏՅԱՆ ԹՐԱԿԻԱ

Թուրք-հունական առճակատման նոր դլոտs

Կոստանդնուդոլսում, Իմիոս եւ Թենեդոս կղզիներում ապրող հույների եւ Արեւմտյան Թրակիայում ապրող մահմեդականների հետ, որոնք կողմերի համաձայնությամբ ենթակա չէին դայմանագրով նախատեսված բնակչության դարտադիր փոխանակմանը:

143 հոդվածից, ինչպես նաեւ հատուկ համաձայնագրերից, արձանագրություններից, բացատրական նամակներից ու այլ վավերագրերից բաղկացած Լոզանի դայմանագիրը հայտնում էր հույն-թուրքական դատերազմի ավարտը եւ միաժամանակ ուժերի նոր հարաբերություններ էր սահմանում Էգեյան ծովում եւ Թուրքիային սահմանամերձ հունական Արեւմտյան Թրակիայի մարզում: Պայմանագրի 37-45 հոդվածներ անդրադառնում էին դայմանավորվող կողմերի փոքրամասնությունների դարտադանության հարցերին, ընդգծելով երկու երկրների փոխադարձ դարտավորությունը փոքրամասնական խավունքների նկատմամբ:

Այսպիսով, Թուրքիայում փոխանակման ոչ ենթակա հույները հաշվվեցին III.200 մարդ, որոնցից 103.000-ը ապրում էին Կոստանդնուդոլսում, մնացածը Թուրքիային անցած Իմվրոս (հետագայում Գյոքչեադա) եւ Թենեդոս (հետագայում Բոզջաադա) կղզիներում, իսկ Արեւմտյան Թրակիայում մահմեդական կրոնին դատկանող թուրքերը, ինչպես նաեւ դոմակներն ու գնչուները 106.000: Բազմազգ լինելու հանգամանքը հաշվի առնելով Լոզանի դայմանագրի հեղինակները այդ փոքրամասնությունը բնութագրեցին մահմեդական:

Պայմանագիրն այսպիսով սահմանում էր, որ Հունաստանում թուրքական փոքրամասնություն չկա, այլ կան մահմեդական կրոնին դատկանող հունական հաղորդացիներ: «70 տարի հետո, ասում է Թուրքիայի մամլի նախարար Յըլդըրըմ Աքբունան, նման սահմանումը չի կարող ուժի մեջ լինել»:

Այսօր էլ Արեւմտյան Թրակիայի մարզի Քսանթի, Ռոդոպի եւ Էվրոս նահանգներում Շամադասասխանաբար Քսանթի, Ռոդոպի եւ Ալեքսանդրուպոլիս կենտրոններով) ապրող հունական հաղորդացի-մահմեդականները բաժանված են երեք կատեգորիաների՝ թուրքեր, դոմակներ եւ գնչուներ: 1981 թ. մարդահամարի տվյալներով մարզում ապրել են 120000 մահմեդականներ, որոնց 45 տոկոսը թուրքախոսներ են, 36 տոկոսը դոմակներ եւ 18 տոկոսը գնչուներ: Հունաստանի արտգործնախարարության վերջերս հրատարակած տվյալներով, այժմ Թուրքիայում ապրող հույների թիվը կազմում է լոկ 3.5 հազար մարդ:

Թուրքական ծագմամբ հաղորդացիների մի մասը «նորարարներ են, որոնք կողմնորոշվել են դեպի բեմական բարեփոխումները, իսկ մեծ մասը հին մահմեդականներ են, որոնք ընդունում են հին ավանդույթները: Նրանք հիմնականում գյուղացիներ են, իսկ հաղորդներում կան նաեւ արհեստավորներ ու բանվորներ:

Դոմակների ծագումն անորոշ է: Թուրքերը պնդում են, որ նրանք թուրքական հին ասպատակող ցեղերի մնացուկներ են, որոնք այստեղ հաստատվել են դեռեւս բյուզանդական ժամանակաշրջանի զարգացման տարիներին: Բուլգարները ասում են, որ դոմակները իրենց բոնի մահմեդականացված ազգակիցներն են: Հավանաբար նրանք Բուլղարիայի եւ Հունաստանի սահմանագծի Ռոդոպի լեռնազանգվածի բնիկներ են, որոնք մահմեդականացվել են ռոմանյան կայսրության տարիներին, խոսում են բուլղարերենի եւ թուրքերենի լեզվական տարբեր դարձակող մի բարբառով: Նրանց բնակության կենտրոնն են համարվում Քսանթիի նահանգի լեռնային գյուղերը, բայց կան նաեւ հաղորդներում հաստատվածներ: Դոմակների մեծ մասը հավատարիմ է հին մահմեդական ավանդույթներին ու երբեմն չի ընդունում իր թուրքական դատկանելությունը:

Մահմեդական գնչուները համարյա հավատարդես բաժանված են Արեւմտյան Թրակիայի երեք նահանգներում:

Արեւմտաթրակիական մահմեդականների մասին թուրքական դահանջները հրապարակվել են 1964 թվից, այսինքն Սամբոլի արյունալի իրադարձություններից հետո, երբ իրագործվեց հույն հաղորդացիների զանգվածային արտաքսումը, որով եւ խախտվեց երկու երկրների փոքրամասնությունների համամասնությունը: Դա լուծ էության ծրագրված մի արշավ էր հույների նկատմամբ, որն ավելի սասդիացավ 1974 թվին Կիպրոսում իրագործված նեռխամժումից հետո:

Անկարան հանգական հողում ունի իր ծրագրերը. Դրանք են.

ա) թուրքացնել Արեւմտյան Թրակիայի տարբեր ազգության մահմեդականներին,

բ) վերջիններ մեջ արմատավորել հույների նկատմամբ կասկած եւ անվստահություն,

գ) բորբոքել «ատելացվածի» հոգեբանություն,

դ) ձգտել մարզի «ինքնավարացմանը» եւ անջատմանը,

ե) միջազգային կազմակերպություններում ձգտել Հունաստանի վարկաբեկմանը, մանավանդ այժմ, երբ Անկարայի վրա է կենտրոնացված համաշխարհային հասարակայնության «կրակը» երկրում մարդու իրավունքների ապաղակող խախտումների համար, եւ այլն:

Վերոհիշյալ հաղորդական կուրսը բմբկահարում են «Արեւմտյան Թրակիայի հեռ համերաշխության միությունը» (Սամբոլ), Արեւմտյան Թրակիայի նախկին բնակիչների միությունները (հատկապես Գերմանիայում) եւ համաթուրքական հարոչությամբ հայտնի դարբերականները, որոնք անարգել տարածվում են մարզում:

Յուրահատուկ «հաղորդական» դեր են սանձնել Արեւմտյան Թրակիայում գործող թուրք ծայրահեղականների բջիջները, որոնք դոմակներին եւ գնչուներին փորձում են սփոփել, որ նրանք լսեն իրենց ազգային դատկանելության մասին:

Տասնյակ տարիներով հրահրելով եւ մահմեդական հույն հաղորդացիները բարեկամաբար գոյակցել են: Նրանք հանգամանք են հայտնում, որ դեռ է ադրեն ու բարգավաճեն իրենց մշակած հողերի վրա, ասի փոխըմբռնման եւ համաձեռ աշխատելու ավանդույթներ են սնեցել:

Արդյունքն առկա է. Ռոդոպի գյուղացիների կենսամակարդակը երկրում նախանձելի բարձրության վրա է:

Մեկ տարի առաջ այցելեցի Ռոդոպի, որտեղ առավել մեծ չափով կենտրոնացված են մահմեդականները: ավելի քան 60 հազար, հիսունյաների 51000-ի դիմաց: Հունաստանի ամենահարուստ գյուղատնտեսական այս նահանգի 24 գյուղերից 21-ը մահմեդական հաղորդացիներով է բնակեցված, հիմնականում թուրքերով: Նահանգային կենտրոն Կոմոտինի հաղորդում վերջինները կազմում են ազգաբնակչության 40 տոկոսը: Անձայրաձիր հարթավայրի բարեբեր հողերում դաշտային աշխատանքները մեքենայացված էին, ամեն մի ճյուղ կապում էր գյուղերի ծառուցյուններից: Գործում էր արհեստական ոռոգման հզոր ցանցը: Գյուղացիները աշխատանքի էին դուրս գալիս ավտոբուսներով, այլ մեքենաներով ու ժամանակակից տեխնիկայով:

Կոմոտինիում խանութների, արհեստանոցների մեծ մասը մահմեդականներին են դատկանում: Վերջիններն օգտվում են տոցիալական աղաահովության համակարգից, լրացուցիչ գումարներ են ստանում ծխախոտագործությունից, դահդանում են իրենց ավանդույթները, ազատ դավանում են իրենց կրոնը, անարգել խոսում իրենց լեզվով:

Մյուս կողմից, հաղորդի կազմակերդվում են թուրքերի ցույցեր, դասակներ եւ բողոքի այլ միջոցառումներ: Մայրենի լեզվով հրատարակվող դարբերական մամուլում տրվում են հակահունական հոդվածներ, գիտնականները Եվրախորհրդարան են դարակում բողոքագրեր, միջազգային գիտաժողովներում փորձում են հեղինակազրկել Հունաստանը:

Այդ «ոտնահարված» փոքրամասնության թիվը տարեցտարի աճում է: Ահա թե որքան են «ենթադրյալ» եւ իսկական ճնշումների տարբերությունները:

Հունաստանում «թուրքական» փոքրամասնության հանդեղ հայաբնակների մասին անհիմն մեղադրանքները, դաղտնալիքները, տարածքային ջրերի, անմարդաբնակ ու բնակեցված կղզիների դատկանելության մասին ճամարտակությունները, ՄԱԿ-ի անդամ Կիպրոսի հողի գրավումը եւ նրա հաղորդացիների սդանությունները, աջ ու ձախ բնամիներ որոնցը Թուրքիայի ներքին դրդդեմներն արտահանելու հատահաս փորձեր են, որոնց արդյունքում այդ երկրում հաղորդակրթությունն ու դեմոկրատիան երկար տարիներով հետ են մղվում: Լարվածության եւ աղակայունացման ստրատեգիայի ուղին «միջազգային դերբերի» ուղի է: Դա վտանգավոր հետամնացություն է:

Սվինը այն ճոճողին ոչ մի լավ բան չի խոստանում, հանգի, ինչպես ասում են, նրանով շատ բան կարելի է անել, բայց նրա վրա նստել չի կարելի:

ՀՈՒԹԱՐՅԱՆ ՊԱՇԱՐՈՍՅԱՆ

Ֆրանսիայում աճում է աղքատների եւ անօթեւանների թիվը

Վերջին տարիներին Ֆրանսիայում ապրող անօթեւանների միջավայրում որոշ փոփոխություններ են տեղի ունեցել: Ինչպես նշում է Ֆրանսիայի կաթոլիկական օգնություն բարեգործական կազմակերպության տնօրեն Ժիլբեր Լագրանեը, «անօթեւանները ասիճանաբար նստակյաց են դառնում բարեգործական ընկերակցությունների ծեռնարկած «տնավորման» խաղաթղթերի հետեւանքով»: Խոսքը ընդլայնվելիս ոչ թե օթեւան, այլ որեւէ հասցե տալու մասին է: Դա սովորաբար բարեգործական այն կազմակերպությունն է, որտեղից նրանք գալիս են ստանալու իրենց նվազագույն նպաստը կամ մյուս նպաստները:

Փոխվել է նաեւ անօթեւանների տարիքային կազմը: Այսօր մինչեւ 25 տարեկան երիտասարդները, հիշյալ բարեգործական կազմակերպության տվյալներով, կազմում են անօթեւանների ընդհանուր թվի մոտ 1/3-ը: Իսկ բարեգործական գործունեության դեպքերի խառնուրդին վերջերս ներկայացված մի զեկուցագրի համաձայն, երիտասարդները կազմում են անօթեւանների նույնիսկ 50 տոկոսը: Վերջերս հայտնվել են նաեւ անօթեւան կանայք, թեեւ նրանց թիվը շատ փոքր է:

Ավելացել է նաեւ բարեգործական ճաշարաններից օգտվողների թիվը: Այսպես, եթե հայտնի դեպքում եւ բարեգործ Կոլյուշի հիմնած բարեգործական ճաշարաններից 1990-91 թթ. ծնունդը օգտվում էր 365 հազար մարդ, ապա նրանց թիվը 1995-96 թթ. ծնունդը հասավ 520 հազարի:

Բայց առավել լուրջ խնդիր է այն փաստը, որ աղքատների մեծամասնությունը օթեւան ունի, բայց չի կարողանում վճարել բնակարանի, էլեկտրականության, խմելու ջրի վարձերը եւ նույնիսկ հոգալ սենյակի ծախսերը: Շատ երեխաներ ամբարվա մեկ օրը դորոց չեն հաճախում, քանի որ մայրերը չվանում են նրանց միակ հագուստը:

1996 թ. Ֆրանսիայում աղքատությունը բնորոշվում է նաեւ նրանով, որ շատերը խաղաթղթերից հեռանում են գյուղերում իրենց բախտը փորձելու համար, որտեղ բնակվարձն այնքան էլ բարձր չէ, իսկ մարդիկ ավելի համերաշխ են: Սակայն դատարկվող գյուղերում եւս դժվար է աշխատանք գտնել: Ժիլբեր Լագրանեը դատապարտում է կառավարիչների եւ օրենսդիրների անտարբերությունը երկրում աճող աղքատության նկատմամբ, որը կարող է առակայունացնել ընդհանուր հասարակական կյանքը: «Չնայած բոլոր ահազանգերին, մենք շատ ենք ուշացել չքավորության տարածման դեմ մղվող դայքարում», ասում է նա:

Համաեւրոպական եւ տեղական մակարդակի սոցիալական ծառայությունները ավելի ու ավելի շատ են հույսները դնում բարեգործական ընկերակցությունների վրա, որոնք կարողանում են որոշ ժամանակ օգնել մարդկանց: Բայց մինչեւ ե՞րբ: Ներկայումս սոցիալական օգնությանը հատկացվող կառավարական միջոցները խիստ անբավարար են անօթեւանների, նվազագույն նպաստ ստացողների եւ բազմաթիվ գործազուրկների բնականոն կյանքը վերականգնելու համար: Ազգային ժողովի աշնանային նստաշրջանում բնակչության աղքատացման դեմ ուղղված օրենքի ընդունման դեպքում անգամ այն կարող է կիրառվել միայն 1998 թ.:

«ԼՈՒՄԱՆ»

ՀԱՄԱՌՈՏ

ՄԱԿ-ի տնօրենների խորհուրդը քննարկում է ոսկու դաշարի 5%-ի վաճառքի հարցը

Միջազգային արժութային հիմնադրամի տնօրենների խորհուրդը սկսել է քննարկել ՄԱՀ-ի ոսկու ողջ դաշարի 5 տոկոսի վաճառքի հարցը, որդեսզի վաճառքից ստացված միջոցները տրամադրի աշխարհի ամենաաղքատ երկրներին: Այդ գումարները կօգտագործվեն ցուցանիշներով վարկեր տրամադրելու համար: Վերջին տարիներին այդդիսի վարկեր ստացած երկրների թվում են Այրանիան, Հայաստանը, Վրաստանը, Կիրգիզիան եւ Մոնդոլիան: ՄԱՀ-ի որոշ անդամ-երկրներ, այդ թվում Իսդանիան եւ Գերմանիան, դեմ են ոսկու վաճառքի ծրագրին:

VOA

Ամերիկացի ուսուցիչների 1/4-ը չունի անհրաժեշտ մասնագիտական որակավորում

Ազգային կրթության հանձնաժողովի զեկուցագրի տվյալներով, ամենքոցի ուսուցիչների ավելի քան 25 տոկոսը համադատասխան գիտելիքների որակավորում չունեն: Զեկուցագիրը կոչ է անում կառավարությանը 4,8 միլիարդ դոլար հատկացնել մանկավարժների որակի բարձրացմանը: Մյուս կողմից հանրադետական կուսակցության կազմակերդիչները ծրագրում են օգտագործել այդ հանգամանքը ընտրաբավում եւ դարտության մատնել դեմոկրատներին:

Վացլավ Հավելի թիկնադահը կասկածվում է գողության մեջ

Չեխիայի նախագահ Վացլավ Հավելը Ֆրանսիայի միջերկրածովյան ափին արձակուրդն անցկացնելուց հետո Պրահայի նախագահական դղյակ վերադառնալով նկատել է, որ դակասում են մի խոշոր գումար եւ ընտանեկան զարդեր: Նրա անձնական դահակազդի անդամներից մեկը, որը «դղյակի դահիկանության դատասխանատուներից է, եւ որին վստահված է նախագահական նստավայրի դաշտդանությունը, ներկայումս ժամանակավորապես բանտարկված է:

«ԼՈՒՄԱՆ»

ԱԶԳ

Մտակրություն

«Արարի» մասին եւ ոչ միայն...

***Նախ ընդհանուր բաներով. ի դեմ. ընդհանուր ձեւակերպումները միշտ չեն բանալ եւ շատ հաճախ ծեծված է լինում ոչ թե խոսքը, այլ հակառակը՝ ականջը: Այս ամենից զատ մեսալոգիկայի կողմից դեռ ընդունելի է նաեւ եզրահանգման կառուցման դեդուկտիվ եղանակը, ուստիեւ բոլոր ընդհանուր հենքերը օգնի մեզ այսօր մասնավորեցնել ասելիքը: Այո, պատմական ժամանակահատվածի վերնագրումս ասպարեզը տեսել է ամենատարբեր խաղախաղերի ծաղկումն ու անկումը, ամենատես այդ բեմը պեղված է դեռ կիսով չափ եւ շատ-պատասխաններ մինչ օրս մշակութային շերտերի խորքերում սպասում են իրենց հարցադրումներին: Այդուհանդերձ a priori ընդունելի է այն, որ ոչ թե խաղախաղերը, այլ դրանց ստեղծած ազգերը վերացել են ճիշտ նույն ասպարեզից սոսկ մի եղանակով՝ նրանք ձուլվել են: Ասիք ունեցել եմ խոսել այն մասին, որ երբեմ ոչ մի պատերազմ եւ նույնիսկ գենոցիդ, ոչ մի երկաբարժ կամ տարերային այլ աղետ ի զորու չեն եղել վերացնել մի ողջ ազգ: Շումերները եւ ասիադիտ ու էլի մի քանի տասնյակ ազգ ու ազգություն լքել են պատմական բեմը, խանգի դատապարտված են եղել մոռանալ իրենց էթոսները, գրական եւ մշակութային այլ արժեքներ: Արժեքներ, որոնց վրա գերազանցապես կարելի է ու անհրաժեշտ է դասավորակել նոր սերունդ, որը պարտավոր է լինել նախնիների իրավահաջորդը: Սա եթե կուզեմ ազգապահպանման գլխավոր գործոնն է... Մի փոքր շարունակելով միտքս, ստիպված եմ կրկնել, որ ճիշտ այն ժամանակ, երբ անտարբեր շուրջս ինքնակամ զրկվեց «իր Գիլգամեշից» կամ խուրիացիոն «Ուլեթուից», հենց այդ պահից եւ սկսվեց հաբեթների ձուլման գործընթացը: Նրանց «խաղաղ եղանակով» նվաճեցին սեմական ցեղերը, որոնք տվյալ ժամանակներում ավելի հարուստ եւ նոր մշակույթի կրողներն էին: Այնուհետեւ նույն պատմությունը կրկնվեց նաեւ արիադացիների, էլամցիների եւ մասամբ ասորիների հետ: Մինչդեռ, ավելորդ չէ նշել այն, որ հիշյալ ազգություններս-ափխարիի առավել հզոր պետությունների ստեղծողներն էին:

Վերադառնալով այսօրյա իրականությանը, ստիպված եմ նշել, որ հայ ազգը ներկայումս նույնպես ծայրման եզրին է: Ազգ, որի քանակի կեսից ավելին դուրսն է, արդեն իսկ ծայրահեղ վիճակում է: Նման իրավիճակն իրոք անմոտ երեւույթ է եւ գուցե երկրագնդում չկա տան համադասխան եւ ոչ մի համանիշ: Այս պատճառով բնական է թվում այն, որ «համադասխան ունենալ իրավիճակը» պետք է ստիպի դառնա համադասխան հակադիր (աղեկված) գործողությունների: Մինչդեռ, գործնականում խողությունը բոլորովին այլ է, եւ երկիրը փորձում է շարունակել իր էվոլյուցիան՝ վաղուց ընդունված եւ քարացած «օրենքներով»: Զարգացումը այդ, ձեռի հետ, համեմվում է տարբեր տեսակի եւ տակի դիֆերամբային դեկլարացիաներով ի փառաբանումն մեր անկախության, անձերի, ու այս տոնի հետեւանքով ամրոցվում է գալիք սերունդը: Սերունդ, որ որդես մկա եղած ու չեղած բոլոր ճեսամորֆոզների, հնարավորության դեպքում, կարող էր դառնալ առաքյալների սերունդ: Մինչդեռ չկա ծրագիր, չկա դպրոց, չկա կրթություն, չկա մշակված ազգային կոնցեպցիա եւ փոխարեն համատարած անտարբերություն, վայրենի չափերի հասնող եւ այդ չափերն անցնող արտագաղթ, ամբիցիոզ հաբվարկներ, նաեւ մշակույթի մոնոդիա եւ լավագույն դեպքում ինչ-որ մի «ոսնդրելիա», որն անկեղծ ասած անոթիածին է: Սակայն, արդեն ժամանակն է մասնավորեցնել մեր միտքը, խանգի ինչպես կասին գիպանոլ Հոմում «Qui nimium probat, nihil probat» («Նա, ով շատ բան է ապացուցում, նա ոչինչ չի ապացուցում»):

Ամենայն պատասխանատվությամբ այսօր կարելի է հայտարարել, (Ասված տվել է հայտարարությունն այսօր մոդային է), որ համանահնացված մեր եզերքում, «Արար» բաժանական հրատարակչական համալիրը այն եզակի ցամաքներից է (եթե ոչ եզակին), որտեղ բաս էությանն է գնահատվում նեկայիս կացությունը եւ այն հեռանկարները, որոնք կարող են գործոն դառնալ հենց վաղը... «Ոչ ավելի ու, քան այսօր ոչինչ տվել համալիրին մշակել եւ դառնալ հեղինակ զարգացման 10-ամյա մի ծրագրի, որի յուրաքանչյուր կետի իրականացումը կարող կլիներ ինչ-որ գրել այն մտահոգությունը, որն «ընդհանուր մտքի» ձեւով տեղ էր գտել հոդվածի նախաբանում:

«Ար» ազգ բառոն, «Արար» ամսաթերթ, «Արվեստ» ամսագիր, «Բեմ» պատկերասրահ, «Արվեստանոց» բաժանական դպրոց, մասնագիտական բաժանական գրադարան, թատերական ուսումնասիրությունների կենտրոն ու էլի մի քանի կետ... ահա սա՞ է «Արար»-ի ծրագիրը: Ծրագիր, որը ոչ թե օդից կառչած է, այլ իրականացվում է եւ ընդ որում համալիրի աշխատակիցների ջանքերով: Ծրագրի գործնական արտահայտությունն այն է, որ միայն վերջին մեկ տարվա ընթացքում համալիրի սրահում հրավիրված միջոցառումների թիվն անցնում է մի քանի տասնյակից՝ ցուցահանդեսներ, ներկայացումներ, մենախոսներ, գրական եւ երաժշտական երեկոներ, բոլոր եւ մեծ դժվարությամբ, սակայն լույս է տեսնում «Արար» ամսաթերթը, որն իրոք ազգանպաստ է եւ աչքի է ընկնում բաց լեզու վերլուծությամբ, եւ կարծում եմ, ոչ անցողիկ գործերի տպագրմամբ: Կարեւոր եւ նույնիսկ բախտորոշ է այն, որ սրահը տրամադրվում է անվճար, եւ համալիրի դռները փաստորեն միշտ էլ բաց են ասելիք ունեցող մեկի եւ շատերի առջեւ: Եվ այս առաքինությունը, ինչպես եւ ամեն առաքինություն, զարկ է երկրային շահից եւ անվճար է ոչ թե այն դրդճառով, որ ինչպես ասում է արվեստի մարդ եւ մեկենաս, համալիրի տնօրեն Գեորգի Վանյանը... «որ մենք աղքատ ենք եւ չգիտենք թե ինչ է նշանակում շուկայական հարաբերություններ: Ոչ, այսօր անհրաժեշտ է ստեղծել դաշտ դաշտ գալիք սերնդի համար, որպեսզի հանդիսանալ հաջորդականություն եւ դասաիարակել նոր հասարակության նոր քաղաքացուն»: Հայտնի եւ անհայտ են այն դժվարությունները, որոնց հաղթահարման շնորհիվ միայն շատերիս համար հնարավորություն ընձեռվեց ներկայանալ եւ ներկայացնել: Այդ «դժվարությունն» կոչվածի ամեն մի առանձին ոլիսական հաղթահարվեց կրկին սոսկ «Արարի» աշխատակազմի ուժերով: Հանգամանք, որն իրոք մտահոգիչ է, ինչպես եւ մտահոգիչ է այն, որ այսօր համալիրի կազմը ստիպված է գործել իր իսկ շենքի միջանցքում, խանգի ինչպես ասում են՝ «տարածքն է զավթված»:

«Թատրոն» բարեգործական հիմնադրամ», այսպես են իրենց գերադասում անվանել սովորական այդ զավթիչները, որոնք շատ մոդային (տվյալ դեպքում «բարեգործական»-ի) բոլով, արդեք են մի ողջ ծրագրի իրականացման: Միտում չկա մեծարել մեկին վարկաբեկելով մյուս կողմը: Այնուամենայնիվ, ինքս եմ ականատես եղել, թե ինչպես է «բարեգործականը» վերջին պահին տապալել նմանը չունեցող մի ցուցահանդես, անձամբ ունկնդիր եմ եղել, թե ինչպես բաժանական գործիչների համագումարում զեկուցելիս, «բարեգործականի» տնօրեն Լեւոն Թոլոսիկյանը փորձում էր իրեն հասցեագրել «Արարի» բոլոր նվաճումները... Օրինակները կարելի է շարունակել, սակայն կարեւորը տվյալ դեպքում հարցի էությունն է: Փաստորեն վիժվում է մի ծրագիր, եւ այդ վիժեցումը ուզում են ներկայացնել՝ երկին շատ մոդային դարձած «տարածքային վեճի» ձեւով: Մինչդեռ խնդիրը տարածքային չէ, դա ակնհայտ է եւ այդ մասին վկայում է նաեւ Գեորգի Վանյանը: Կորցրածը լինելու է շատ ավելին, քան 3-4 տասնյակ քառակուսի մետր մակերեսը... կորսի եզրին է հնարավորության պահը, գալիք սերնդի արտահայտման եւ ինքնուրույնման միակ ազատ եւ հասու ամբիոնը, կորսի եզրին է ծրագիրը:

Ժամանակն է, որ համադասխան մարմիններ ամենայն լրջությամբ մոտենան այս հարցին: Եթե, իհարկե, նրանց խորթ չէ ազգային մտածելակերպը:

ԱԲԻՍ ԴԱՇԻՆՅԱՆ

ՍԱՆՍԱՏ

Լուսանկարներ Արեւմտյան Հայաստանից

Ժիրայր Գույումճյանի 39 գունավոր նկարները Մոնրեալի Ալեք Մանուկյան կենտրոնում

Վերջին երեքնում հայրենի տան կարոտը եվրոպայից եւ Ամերիկայից շատ հայերի է տարել ճանապարհորդության դեպի Արեւմտյան Հայաստան, Կիլիկիա: Տարագիր հայրիկի կամ մեծ հայրիկի պատմածները, հուշերը փնտրփնտր հավաքելու, դրանք իրականության հետ համեմատելու, ցեղի հիշողության մեջ վերստին ամրագրելու համար շատ հայեր են գնում տեսնելու Տիգրանակերտը, Կեսարիան, Այնթաբը, Վանը, Կարինը,Կարսը: Դրանց մի մասը, երեւի շատ էլերը, վերադարձին հայրենակիցների հետ իրենց տպավորությունն են կիսում մամուլի, տեսաֆիլմերի կամ լուսանկարների միջոցով: Մի քանիսն էլ այն հրամցնում են ավելի մեծ լսարանների առաջ:

Այդպիսի մի միջոցառում տեղի ունեցավ ուրբաթ օրը, սեպտեմբերի 13-ին, Մոնրեալում, ՀԲԸ Միության Ալեք Մանուկյան կենտրոնում: Մեծադիր 39 լուսանկար էր ցուցադրված, գեղեցիկ շրջանակների մեջ, բոլորն էլ գունավոր: Յուրաքանչյուրի տակ տեղադրված առանձին քարտեզը, տեղանքի անգլերեն եւ հայերեն բացատրությունը, հակիրճ պատմականը հնչեցնում էին նկարի ընկալումը: Վանի նշանավոր բերդը՝ ամբողջական համայնապատկերով, Անիի Մայր տաճարը, Էրզրումի բերդը, Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին ու բերդը, Մեհրի դուռը Վանում, Սուրբ դեռեւս դժվարամատչելի այդ քաղաքի համայնապատկերը, Այնթաբի նշանավոր եկեղեցին՝ Պալյանի կողմից կառուցված եւ այժմ մզկիթի վերածված, Խարբերդն ու իր բերդը, Աղթամարի եկեղեցին, Սուլուխի կամուրջը, Տիգրանակերտի Ս. Կիրակոսը, Սարաչի (ներկայումս կահրամանի-հաղթական բառի հավելումով) համայնապատկերը, Ցեյթունը՝ կիսամերկ լեռների գոգին, Արարատը՝ էն կողմից դիտված, Բիբլիսը, եփրատ գետն ու Տիգրիսը: Վերջապես՝ հայրենի բնաբխարհի տարբեր անկյունները, հարազատ ու հեռու, իրական եւ անիրական:

Լուսանկարների հեղինակը Ժիրայր Գույումճյանն է, երեւանի բժշկական համալսարանի 1974 թ.-ի շրջանավարտ եւ այսօրվա Մոնրեալում, հարգված մի բժիշկ, որ նույնպես այդ համալսարանի շրջանավարտ իր հոգեբույժ տիկնոջ՝ Ռիտա Սոլոմոնյանի հետ 1994 թ.-ին ընդամենը 2 շաբաթով եղել է Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում եւ լուսանկարել: Հեղինակը արվեստագետի հովեր չի տվել իրեն, նրա նպատակը եղել է բնական միջոցներով, հանդիպակաց դիրքերից, առանց որեւէ անկյուն շեշտելու, պարկեշտ վերարտադրել տեսածը: Տեղ-տեղ միայն, երբ բնությունն ու արեւը նպաստավոր են եղել, նա օգտագործել է դրանք, առանց որեւէ բան գիջելու կամ ավելացնելու բնապատկերին:

Մենք ունեցել ենք Արեւմտյան Հայաստանն ու Կիլիկիան պատկերած ուրիշ վավերագրող լուսանկարիչներ: Այս պահին նրանցից հիշում եմ Հովհաննես Ճերեճյանի (Ֆոտո Շիրազ, Բեյրութ) եւ հանգուցյալ Գեւորգ վարդապետ Կարապետյանի (նույնպես Բեյրութ) հարուստ հավաքածուները, որոնք պահպանվում են լուսապատկերների (սլայդների) ձեւով: Գոնե, Ժիրայր Գույումճյանի ներկա հավաքածուն, որի մի մասն էր միայն ցուցադրվում մինչեւ կիրակի օրը շարունակված ցուցահանդեսում, դրանց արժեքավոր հավելումն է: Բայց, քանակականից անդին, այն հայրենի տան կարոտի արծարծումն է:

Հ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Պատմության մեծ մեկենասների շարքը՝ Գալուստ Գյուլբենկյանով

«Ֆիգարո Մագազինը» նոր շարք է ձեռնարկել՝ նվիրված պատմության մեծ մեկենասներին, տեղեկացնում է «Յառաջ» օրաթերթի սեպտեմբերի 10-ի համարը: Շարքը սկսվում է Գալուստ Գյուլբենկյանով՝ «Նախանձախնդիրն հաւաքող իր գանձերուն, որոնք անցեալին պատկանած էին Ռուսաստանի կայսրերին կամ Ռոշիլդներուն, Գալուստ Կիւլպենկեան եղաւ նաեւ դարուս ամենէն առատաձեռն մեկենասներէն մին: Իր հաւաքածոն զոր նուիրեց Լիզբոն քաղաքին, հմայիչ է: Թէ ինչպէս Կիւլպենկեան զայն հաւաքեց, նաեւ սովորական չէ», գրում է թերթը: Վերոնիկ Փրաքը Գյուլբենկյանին ներկայացնում է ծագումով՝ հայ, ծնունդով՝ թուրք, հարստությամբ՝ իրավագիտ, աղբելակերտությամբ՝ անգլոսաքսոն, սրտով՝ փարիզեցի, կյանքի մայրամուտի որդեգրությամբ՝ պորտուգալացի: Հոդվածագիրը դրվագներ է պատմում Գյուլբենկյանի կյանքի այն հատվածից, որը վերաբերում է գանձերի գնման՝ նկարչության, արձանագործության, թե այլ: Հոդվածը ծոխացված է լուսանկարներով՝ իր, որդու, նաեւ հավաքածուն պատկերող:

Սեւանում անցկացվեց «Ռուսաստանի օրը»

ՍԵՎԱՆ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի ազգությունների արվեստի փառատոնի շրջանակներում հաղթի ճակատի պալատում անցկացվեց «Ռուսաստանի օրը»: Միջոցառման անցկացումը Սեւանում պատահական չէր, քանի որ հաղթն ունի մոտ 400 հոգուց բաղկացած ռուսական համայնք ու ազգամիջյան լավ հարաբերությունների բարի ավանդույթ:

Հանրապետության անկախության հինգերորդ տարեդարձի առթիվ կազմակերպված տոնախմբությունը, որ նախաձեռնել էր Հայաստանի ազգությունների միությունը, բացեց Գեղարքունիքի մարզպետ Վլադիմիր Սովսիսյանը: Նա ներկայացրեց հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ու Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի ողջույնի ուղերձները փառատոնի մասնակիցներին, նշելով, որ մշակութային այսպիսի միջոցառումները միշտ նոր թափաս ու բովանդակություն են հաղորդում ժողովուրդների բարեկամությանը, դարձնելով այն ավելի ամուր ու գեղեցիկ:

Ելույթ ունեցան ազգությունների միության ռուսական, ուկրաինական, հունական եւ այլ համայնքների ներկայացուցիչներ, որոնք փառատոնը բնութագրեցին իբրեւ մարդկանց մերձեցման լավագույն միջոց:

Այնուհետեւ բեմահարթակը տրամադրվեց փառատոնի մասնակից երաժշտական խմբերին: Իրենց արվեստը ցուցադրեցին Քանաքեռի Ս. Աստվածածին ռուսական եկեղեցու եւ Սեւանի ռուս համայնքի երգչախմբերը, «Չկնոր» ընկերության մանկական ազգագրական խումբը, Սեւանի արվեստի դպրոցի սաները, ուրիշներ:

«Այս փառատոնով նշում ենք անկախ Հայաստանի հինգերորդ տարեդարձը, ասաց ազգությունների միության նախագահ Վլադիմիր Շատոեւը, ինչը նշան է այն բանի, որ բոլորս էլ Հայաստանի զավակներն ենք, նրա լիիրավ քաղաքացիներն»:

Պավարոտտիի փոխարեն Չինաստանը գերադասում է ամերիկացի Քոդերֆիլդին

Ըստ տեղեկությունների, Չինաստանը վերանայում է իր ծրագիրը խոշոր տենոր Լուչանո Պավարոտտիին Հոնգ Կոնգի 1997-ի վերադարձի տոնակատարություններին հրավիրելու մասին, քանի որ Պավարոտտին «խիստ բանկ է»: Հարավչինական Մորնինգ Փոսթ թերթը հայտնում է, որ տոնակատարությունների կազմակերպիչները ծրագրում են հրավիրել հանրահռչակ ամերիկացի Դեյվիդ Քոդերֆիլդին, որն իր ելույթի համար հոնկոնգյան մոտ 7 միլիոն կամ ամերիկյան 900 հազար դոլար է դրահանջում: «Պավարոտտիի դրամագլուխն ավելին է ուզում», նշում է թերթը:

«ԱՅՍՕՐՅԱՆ»

ՀԱՅԱՍՏԱՆ

Ամենաբարձր հոնորարը՝ Ուինֆրիին, հետո՝ Սփիլբերգին, հետո՝ Չեմսոնին...

«Ֆորբզ» հանդեսը հրապարակեց ամենաբարձր հոնորարներ ստացող աստղերի ցուցակը: Այն գլխավորում է հայտնի հեռուստադերասանուհի, զվարճագրող հաղորդավարի հեղինակ եւ զուգավար Օփրա Ուինֆրին, որը վերջին երկու տարվա ընթացքում վաստակել է 171 միլիոն դոլար: Երկրորդ տեղում 150 միլիոն դոլարով աշխարհահռչակ կինոբեմադրիչ Սթիվեն Սփիլբերգն է: Առաջ ցուցակում նշված է փոքր երգիչ Մայլի Չեմսոնը, երկու տարում նրա եկամուտը կազմել է 90 միլիոն դոլար: 4-րդ տեղում 77 միլիոն դոլարով «Ռոլլինգ Սթոունզ» խումբն է: Ռոքի մեկ ուրիշ վետերան «Իգլզ» ամերիկյան խումբը 2 միլիոն դոլարով զիջելով «ռոլինգներին» 5-րդ տեղն է զբաղեցրել: Իսկ դերասան Սենոյ Նվարցենեգերն ու ճոխարար Դեյվիդ Քոփերֆիլդը 74 միլիոն դոլար են վաստակել եւ կիսել են 6-րդ տեղը:

«ԱՅՍՕՐՅԱՆ»

«Բիթլզի» մասունքներից՝ այս շաբաթ Լոնդոնի աճուրդում

Լոնդոնի աճուրդում այս շաբաթ վաճառքի են հանվելու «բիթլմաններին» հետաքրքրող բազմաթիվ իրեր: Դրանցից ամենաթանկը, հավանաբար կլինի թղթի այն կտորը, որի վրա գրվել են «Վիթ Դը Լիթլ Հելփ Ֆրոմ Մայ Ֆրենդզ» «Իմ ընկերների օգնությամբ» երգի խոսքերը: Պատահմամբ պահպանված այդ թղթի կտորի նախնական գինն աճուրդում 124 հազար դոլար է: «Բիթլմաններին» առաջարկվող երկրորդ թանկարժեք մասունքը՝ 35 վայրկյանանոց մի ժապավեն է, որը, ենթադրաբար, «Բիթլզ» խումբն ստեղծած առաջին ժապավենն է: Դրա նախնական գինը 108 հազար 900 դոլար է:

«ԱՅՍՕՐՅԱՆ»

ԱՇԽ

Մարզական

ԵՐԵՎԱՆ-96

Հայաստանը օլիմպիադան սկսեց հաղթանակով

Սկիզբը էջ 1

Խոսքը տրվում է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ, օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Վանիկ Զաքարյանին: Նա ողջունեց հանդիսատեսության ղեկավարներին, որոնց անմիջական ջանքերի շնորհիվ խոշոր դարձավ մեծ մարզահանդեսի անցկացումը մեր երկրում: Բուռն ծափահարություններով ողջունվեց Զաքարյանի ողջույնի խոսքն ուղղված աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովին: Վերջինս հաճելիորեն զարմացած էր իրեն հայրենակից համադաշնների արտակարգ ջերմ ընդունելությունից: Վանիկ Զաքարյանը օլիմպիադայի բոլոր մասնակիցներին մաղթեց հաջողություն և ստեղծագործական հաջողություններ:

Վարչապետ Հրանտ Բագրատյանը, որը նաև օլիմպիադայի անցկացման կառավարական հանձնաժողովի նախագահն է, իր ելույթում շեշտեց հինավուրց խաղի նկատմամբ հանդուրժած այն սերը, որ կա մեր ժողովրդի մեջ, աշխարհի իններորդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի մեծ ավանդը հայկական շախմատի զարգացման գործում և, ի գնահատումն այդ ամենի արժեորեց շախմատային մեծ փառատոնը Երևանում անցկացնելու ՖԻԴԵ-ի որոշումը:

Այնուհետև 127 դաստանիներ ու աղջիկներ խոշոր էկրաններով դահլիճ բերեցին օլիմպիադայի բոլոր մասնակից երկրների դեսպանական դրոշները: Դա շատ գեղեցիկ և տպավորիչ տեսարան էր, որն ընդգծում էր շախմատային ողջ փառատոնի նշանակալիությունն ու վեհությունը:

Իր հակիրճ խոսքից հետո հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը համաշխարհային 32-րդ օլիմպիադան հայտարարեց բացված, իսկ Գարրի Կասպարովը վառեց օլիմպիադայի խորհրդանշական հավերժական կրակը: Ապա ողջույնի խոսքով հանդես եկան ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովն ու աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը: Իլյումժինովը մասնավորապես նշեց, թե արդեն զգացվում է, որ օլիմպիադան կազմակերպված է բարձր մակարդակով և կանցնի մեծ հաջողությամբ: Նա հույս հայտնեց, որ բացման այս գեղեցիկ արարողությունը կվերականգնի շախմատային հանդիսությունների երթևեկի գրավչությունն ու հմայքը:

Առաջ հնչեցին 32-րդ օլիմպիադայի շախմատային ազդանշանը. լի է միայն երգի անգլերեն տեքստի անհրաժեշտությունը: Փնչեւ, հանդիսությունն ավարտվեց Արամ Խաչատրյանի հանրահայտ «Սուսերով դարի» կատարմամբ:

Բացման արարողությունից հետո դեռ երկար ժամանակ են հյուրերը, և մեր շատ շախմատիստներ չէին շտապում հեռանալ մարզահամերգային համալիրի առաս լույսերով ողողված շքեղ սրահներից: Կարելի է չկասկածել, որ տոնակատարության զգացումի այդ գեղեցիկ մթնոլորտը կիբեխի օլիմպիական մրցաշարի բոլոր օրերին:

ՖՈՒՏԲՈԼ

«Կոտայքի» հերթական հաղթանակը

ՀՀ բարձրագույն խմբի առաջնություն
7-րդ տուր

«Զանգեզուր»-ՀՄՄ	0-0
«Արարատ»-«Երեւան»	1-3
«Ցեմենտ»-ԲԿՄԿ	3-1
«Կոտայք»-«Շիրակ»	2-0
«Դարաքաղ»-«Փյունիկ»	0-1
«Վան»-«Արաքիր»	8-0

«Կոտայք»-«Շիրակ» խաղը տուրի կենտրոնական հանդիպումներից էր: «Կոտայքը», որը նախորդ չորս խաղերում դաշտից դուրսված չի հեռացել, այս հանդիպումն էլ սկսեց շատ վստահ: Հաշիվը կարող էր բացվել արդեն 15-րդ րոպեին, երբ Մկրտիչ Հովհաննիսյանը մեկ-մենակ հայտնվեց դարպասապահի դիմաց: Սակայն հարձակվողը մի դաշտ հասցրեց եւ «Շիրակի» դաշտպանները կարողացան նրանից խլել գնդակը: Քիչ անց անկյունային խաղարկումով Լեւոն Սարգսյանի փոխանցումից հետո գլխի հարվածով խաղի հաշիվը բացեց գրոհներին հաճախակի միացող դաշտպան Ալբերտ Աֆյանը: Հաշվի մեջ առաջ անցնելուց հետո էլ դաշտում ավելի ակտիվ էին աբովյանցիները: Հարմար դիրքերից վրիպեցին Վահրամ Հովհաննիսյանը, Գագիկ Մանուկյանը: 38-րդ րոպեին Մկրտիչ Հովհաննիսյանը խաղընկերոջից ստանալով սուր փոխանցում, երկրորդ անգամ գրավեց գյուտերցիների դարպասը:

Հանգստից հետո «Շիրակը» ուժեղացրեց ճնշումը: Աբովյանցիները խելամտորեն էին դաշտպանվում: Ունենալով 2 գնդակի առավելություն, նրանք ավելի շատ էին գնդակ պահում, խաղարկում էին իրենց կիսադաշտում: «Շիրակի» «շարժիչը» Արթուր Պետրոսյանը, որին հաճախ է հաջողվում դժվարին դաշտերին նեցուկ լինել իր թիմին եւ վարպետության շնորհիվ եզրային անհատական անցումներով եւ գոլային փոխանցումներով բեկում մտցնել խաղի ընթացքի մեջ, այս անգամ համարյա թե անգործության էր մատնված: Նրան ամբողջ դաշտի երկայնքով սպվերի նման հետաքրքրում էր Ֆիզիկական լավ տվյալներ ունեցող Գագիկ Մանուկյանը: Կոպասավոր իրադրություն ստեղծվեց. Արթուր Պետրոսյանին հաջողվեց սլացիկ անցումով ձերազատվել հետաքրքրող դաշտպաններից: Բայց նրան ետեւից կոպտորեն գցեց Կոտայքցի դաշտպանը: Դրվագը կարծես կրկնություն էր Հայաստան-Պորտուգալիա խաղից, երբ սլովակիացի մրցավարը արգելված հնարքի դիմելու համար դաշտպանը հարաղելու դաշտից հեռացրեց կարգազանց ֆուտբոլիստին:

Տվյալ դարագայում Սլավա Դազարյանը բավարարվեց զգուշացումով: Թերեւս ճիշտ կլինի, եթե մեր մրցավարները էլ գործեն առավել կտրուկ, խիստ լինեն մանավանդ այն ֆուտբոլիստների նկատմամբ, որոնք թույլ են տալիս կոպտություն, մանավանդ հավաքականի խաղացողների նկատմամբ: Չէ՞ որ Հայաստանում այսօր բարձրագույն ֆուտբոլիստները մեծաթիվ չեն, եւ թեկուզ մեկ խաղացողի վնասվածքը կարող է բացասաբար անդրադառնալ հավաքականի խաղի հետագա ընթացքի վրա: Նման դարագայում մրցավարի անգիջում վերաբերմունքը նաեւ նախազգուշացնում է ֆուտբոլիստներին խաղի ընթացքում իրար նկատմամբ ունենալու ոչ միայն արդարացի, այլեւ բարեկիրթ դահիճաձեւ:

«Կոտայքը» վաստակելով եւս երեք միավոր, մեծ առաջատարների շարքը: «Կոտայքի» ղեկավարներին հաջողվել է հասնել որոշակի դրական արդյունքի: Թիմը հանդես է գալիս կայուն կազմով, ցուցադրում է հատուն ու գրագետ ֆուտբոլ:

Մրցաշարային աղյուսակը
սեպտեմբերի 17-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. «Երեւան»	7	6	1	0	20-5	19
2. «Փյունիկ»	6	4	2	0	14-7	14
3. «Արարատ»	7	4	1	2	17-8	13
4. «Վան»	7	4	0	3	14-9	12
5. «Կոտայք»	7	3	2	2	18-6	11
6. «Շիրակ»	7	3	2	2	11-6	11
7. «Ցեմենտ»	7	3	2	2	11-9	11
8. «Դարաքաղ»	7	3	2	2	10-9	11
9. ՀՄՄ	7	2	1	4	7-18	7
10. «Արաքիր»	7	1	0	6	4-31	3
11. «Զանգեզուր»	7	0	3	4	4-19	3
12. ԲԿՄԿ	6	0	0	6	5-14	0

Հաջորդ տուրում կիանդիպեն.
ԲԿՄԿ-«Զանգեզուր»
«Ցեմենտ»-«Արարատ»
«Կոտայք»-«Երեւան»
«Շիրակ»-«Դարաքաղ»
«Փյունիկ»-«Վան»
«Արաքիր»-ՀՄՄ

ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ

Հայաստանի տղամարդկանց առաջին հավաքականի հաղթանակը Թուրքիայի թիմի նկատմամբ (3,5:0,5)

Ստացվեց այնպես, որ վիճակահանության քմահաճույքով առաջին իսկ տուրում Հայաստանի տղամարդկանց առաջին հավաքականը հանդիպեց Թուրքիայի թիմի հետ: Ուշագրավն այն է, որ չորս տարի առաջ Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում տեղի ունեցած համաշխարհային օլիմպիադայում, որտեղ հայ շախմատիստները գրավեցին մրցանակային երրորդ տեղը, առաջին իսկ տուրում հանդիպեցին հենց Թուրքիայի հավաքականի հետ եւ հաղթեցին նույն 3,5:0,5 հաշվով: Հետաքրքիր է նաեւ, որ այն ժամանակ մեր թիմից, ինչպես եւ այս անգամ, միակ ոչ-ռուս արեց մեր ամենափորձառու շախմատիստը միջազգային գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանը ու երկու դեպքում էլ միավորը կիսեց նույն մրցակցի՝ Արդումանի հետ: Սա արդեն լավ նշան է, եւ հույս ունենանք, որ մեր հավաքականը Երեւանում նույնպես կդառնա մրցանակակիր: Ի տարբերություն նախորդ օլիմպիադաների եւ մյուս դաշտոնական թիմային մրցումների, մեր հավաքականում առաջին եւ երկրորդ խաղատախտակների տեղափոխություն է կատարվել: Երեւանյան օլիմպիադայում առաջին խաղատախտակի վրա հայտնվորված է Վլադիմիր Հակոբյանը, իսկ Ռաֆայել Վահանյանը ներկայացնելու է երկրորդ խաղատախտակը: Սակայն թուրքերի հետ առաջին տուրի խաղում Վլադիմիր Հակոբյանը հանդես չեկավ: Ըստ գործող կարգի, մյուս խաղատախտակներում հայտնվորված շախմատիստները մեկով վեր բարձրացան, եւ Լեոնյանը, որը հիմնականում պետք է խաղա երրորդ խաղատախտակի վրա, այս անգամ մրցեց երկրորդ խաղատախտակի վրա: Նրա մրցակիցն էր Յելմազը: Լեոնյանը խաղում էր սպիտակներով եւ կարողացավ միավոր բերել իր թիմին: Հաղթական երկրորդ միավորը Հայաստանի հավաքականին բերեց Աշոտ Անասասյանը, որի մրցակիցն էր Բայրոմը: Անչափ երկար տեւեց Իոթեմ-Միհասյան հանդիպումը: Երեւանցի շախմատիստից մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի ի վերջո կարողանա կոտրել մրցակցի համառ դիմադրությունը: Եւ այսպես, Հայաստանի տղամարդկանց առաջին հավաքականի մենակարկը հաստատվեց:

Օլիմպիադան հաջող սկսեցին նաեւ Հայաստանի տղամարդկանց երկրորդ հավաքականի շախմատիստները, որոնք 4:0 հաշվով առավելության հասան Մակաոյի հավաքականի նկատմամբ:

Չոր հաշիվ գրանցվեց նաեւ Հայաստանի կանանց առաջին թիմի եւ Անդիլների հավաքականի միջեւ մրցավեճում: 3:0 հաշվով հաղթեցին հայ շախմատիստուհիները: Իրենց մրցակիցների նկատմամբ առավելության հասավ Էլինա Դանիելյանը. Գոհար Հլոդոյանը եւ Լիլիթ Մկրտչյանը:

Քիչ էր մնում առաջին իսկ տուրում խոշոր անակնկալի հեղինակ դառնային Հայաստանի կանանց երկրորդ հավաքականի ներկայացուցիչները: Վիճակահանության քմահաճույքով նրանք առաջին իսկ տուրում հանդիպում էին օլիմպիադայի չեմպիոնի կոչման ամենագլխավոր հավակնորդի՝ Վրաստանի գրոսմայստերական կազմի հետ: Առաջին խաղատախտակի վրա Արուսյակ Գրիգորյանը սուերով հաղթական դիրք էր ստացել աշխարհի նախկին չեմպիոնուհի Մայա Չիբուրդանիձեի հետ մրցավեճում: Սակայն ուժեղ ցայտնոտում ստուգիչ խաղում Գրիգորյանը կորցրեց սխալ քայլ տվեց եւ անմիջապես անճնահատ եղավ: Իոսելիանին առավելության հասավ Լյուդմիլա Ասլանյանի նկատմամբ: Իսկ ահա երրորդ խաղատախտակը ներկայացնող Նաիրա Մովսիսյանը սուերով կարողացավ հաղթել գրոսմայստեր Նինո Գուրիելիին: Հայաստանի երկրորդ հավաքականը ուժեղ մրցակցին զիջեց 1:2 հաշվով:

Առաջին տուրում թե տղամարդկանց եւ թե կանանց մրցաշարերում բարձր տեղերի հավակնորդները հիմնականում հեշտությամբ առավելության հասան իրենց մրցակիցների նկատմամբ: Այսպես, տղամարդկանց մրցաշարում չեմպիոնի կոչման ամենագլխավոր հավակնորդը Ռուսաստանի հավաքականը 3,5:0,5 հաշվով հաղթեց Ֆինլանդիայի թիմին: Ընդհանրապես, աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը նախընտրեց առաջին տուրում հանգստանալ: Ռուսաստանի թիմին հաղթական միավորներ բերեցին Դրեեւը, Սվիդլերը եւ Բարեեւը: Միակ ոչ-ռուսին արեց Ռուբլեւսկին: Համաշխարհային օլիմպիադաների բազմակի չեմպիոն, Հունգարիայի տղամարդկանց հավաքականը, որը գլխավորում է գեղեցիկ սեռի ներկայացուցիչը Հուդիթ Պոլգարը, 3,5:0,5 հաշվով հաղթեց Ավստրիայի թիմին, ընդ որում, Պոլգարն առավելության հասավ Սաանենի նկատմամբ: Մրցանակային տեղի հավակնորդներից եւս մեկը՝ Անգլիայի հավաքականը 3,5:0,5 հաշվով հաղթեց Ինդոնեզիայի թիմին:

Ուկրաինացիները՝ Վասիլի Իվանչուկի գլխավորությամբ 3:1 հաշվով հաղթեցին Իսլանդիայի թիմին:

ԱՄՆ-ի հավաքականը, որը նույնպես օլիմպիադայի ֆավորիտներից է եւ հիմնականում կազմավորված է նախկին ԽՍՀՄ շախմատիստներով, 3:1 հաշվով հաղթեց Պարագվայի թիմին:

Կանանց մրցաշարում առաջին տեղի հավակնորդներից Հունգարիայի հավաքականը 3:0 հաշվով հաղթեց Շվեդիայի թիմին, իսկ Չինաստանի հավաքականը նույն հաշվով առավելության հասավ Կիրգիզիայի հավաքականի նկատմամբ:

Ահա առաջին տուրում արձանագրված եւս մի քանի հանդիպումների արդյունքները.

Տղամարդիկ	
Ուրուգվայ-Էստոնիա	1:3
Բելառուս-Սինգապուր	3,5:0,5
Հոնկոնգ-Արգենտինա	0:4
ՄԱԷ-Լեհաստան	0:4
Պուերտո Ռիկո-Ֆրանսիա	0,5:3,5
Դանիա-Զիմբաբվե	3,5:0,5
Նիկարագուա-Վիետնամ	1,5:2,5
Վրաստան-Նոր Զելանդիա	4:0
Կանայք	
Ավստրիա-Ռուսաստան	0:3
Ուզբեկստան-Վիրջինիներ	3:0
Անգոլա-Լիտվա	0:3
ՄԱԷ-Սլովակիա	0:3
Իսպանիա-Մեյքելներ	2,5:0,5
Իտալիա-Լատվիա	0:3
Շրի Լանկա-Խորվաթիա	0:3

Վերջում ցավով ոչեմ է նշել, որ օլիմպիադայի մենակարկից առաջ Հայաստանի հավաքականում հրաժարվեց խաղալ Սերգեյ Մովսիսյանը: Որոշես դրանիսային նրան փոխարինեց թիմի մարզիչ, գրոսմայստեր Արուսյակ Պետրոսյանը: Երեկ ուշ երեկոյան դեռ Երեւան էին ժամանում շախմատային դաստիարակությունները, եւ օլիմպիադայի կազմակերպիչների համար նոր դժվարություններ՝ թե առաջանում: Ինչպես ասեց տեղեկացրեց օլիմպիադայի գլխավոր մրցավար, միջազգային կարգի մրցավար Ալլաբա Խաչատրյանը, բոլորին էր կթույլատրվի ներգրավվել օլիմպիադայում, բայց հավանաբար առաջին տուրից ուշանալու համար նրանց հաշվին 0 գրանցվի: Այս դարագայում տեղին է հնչում «կարեւորը մասնակցելն է» կարգախոսը:

Շարունակությունը էջ 8-ում

ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՐՐՅԱԼ

Իրանը կռվում է ահաբեկչության դեմ պայքարին, իսկ Չիլլերը նորից է զգուշացնում

Նախագահ Սուլեյման Դեմիրելը Չանքայա նստավայրում ընդունեց Իրանի արտգործնախարար Ալի Ակբար Վելայաթիին: Շուրջ կես ժամ տևած հանդիպման ընթացքում քննարկվեցին Տնտեսական համագործակցության կազմակերպության (ԵԿՕ) նախարարների խորհրդի Իզմիրում կայացած խորհրդակցության արդյունքները, տարածաշրջանի վերջին իրադարձությունները, Իրանի հետ երկկողմ հարաբերությունների, ահաբեկչությանն առնչվող և մի շարք այլ խնդիրներ: Դեմիրելի հետ հանդիպելուց հետո Վելայաթին Անկարայից մեկնեց Թեհրան: Էսենբոգա օդանավակայանում Վելայաթին հայտարարեց, որ «ահաբեկչության դեմ պայքարում Թուրքիային կցուցաբերեմք անհրաժեշտ ամեն տեսակ օգնություն»:

Անդրադառնալով Հյուսիսային Իրաքում տեղի ունեցող վերջին իրադարձություններին Վելայաթին ասաց. «Այդ իրադարձությունները երբեք չեն վերածվում ճառի»: Վերջում Վելայաթին հայտարարեց. «Նման իրավիճակում ես Իրանի, Թուրքիայի և Սիրիայի համագործակցության կոչ եմ անում»:

Միևնույն ժամանակ, արտգործնախարար, փոխվարչապետ Թանսու Չիլլերն ընդունեց Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Մարկ Գրոսմանին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հյուսիսային Իրաքում տեղի ունեցող իրադարձությունների և տարածաշրջանային մի շարք խնդիրներ: Հանդիպման ընթացքում Չիլլերը հայտարարեց, որ Հյուսիսային Իրաքում իրադրության կարգավորման հարցում կարևոր նշանակություն ունի թուրքմենների խնդիրը: Չիլլերն ասաց. «Մենք համոզված ենք, որ քանի դեռ թուրքմեններին տեղական ինքնակառավարման իրավունք չի տրվել, առա Հյուսիսային Իրաքում կայունություն չի առաջանալի»: Հանդիպման ավարտից հետո Չիլլերը լրագրողներին հայտարարեց, որ թուրքմենների իրավունքների պաշտպանության հարցում նախագահ Քլինթոնը բաժանում է Թուրքիայի կառավարության տեսակետները: Առա Չիլլերն ասաց, որ ահաբեկչության դեմ պայքարի հարցում ԱՄՆ-ի օգնությունը օրակարգի հարց է դարձել: Այնուհետև պատասխանելով լրագրողների հարցերին Չիլլերն ասաց. «Հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հարցում Թուրքիան արտահայտում է իր պատասխանատվությունը: Բայց միևնույն ժամանակ այդ երկրների համար պետք է պարզ լինի, որ ահաբեկչության դեմ պայքարի հարցում մենք որևէ զիջման չենք գնա: Մենք մեր բարեկամ Իրանին ուզում ենք հիշեցնել, որ ահաբեկչության դեմ պայքարի հարցում Իրանը պարտավոր է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել, հակառակ պարագայում իր սեփական սահմաններն պաշտպանելու ուղղությամբ Թուրքիան կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը»:

ՀԱՄԱՌՈՏ

Քեյերլի Հիլզի ընթրիքի սակագինը՝ 12500 դոլար

ԼՈՍ ԱՆԳԵԼԵՍ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓԱՍ: Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Քլինթոնը 4 միլիոն դոլարի նվիրատվություն է ապահովել Քեյվերլի Հիլզում տեղի ունեցած ընթրիքի ընթացքում, որի մասնակցության սակը 12.500 դոլար էր: Մեծ թվով դերասաններ և երգիչներ են մասնակցել դրամահավաքի ծեռնարկին, որից առաջ Քլինթոնը խոսացել էր 1.3 միլիոն դոլարի դաշնակցային օժանդակություն տրամադրել Կալիֆոռնիայի դպրոցներին: Քլինթոնն արևմտյան նահանգներ իր եռօրյա այցելության ընթացքում կարողացել է գոյացնել 5.5 միլիոն դոլարի գումար, որ պիտի տրամադրվի դեմոկրատական կուսակցության բոլոր թեկնածուներին:

Ալժիր. կուսակցությունները նախագահի դեմ

Ալժիրի խաղաղական ղեկավարները մի համաձայնագիր են ստորագրել, որով ճանապարհ են հարթում դեպի բազմակուսակցական համակարգի ստեղծումը մինչև առաջիկա տարվա ընտրությունները: Նրանք մեղադրում են նախագահին, որ բանակցությունները օգտագործում է էլ ավելի ամրացնելու կառավարության դիրքերը մահմեդական ապստամբների դեմ մղված պատերազմում, որը խլել է 50 հազար հոգու կյանք: 38 ստորագրողների մեջ, սակայն, չկան երկու ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները:

Ճալալաբադը ռմբակոծվեց

Աֆղանական լրատու գործակալությունը Պակիստանից հայտնում է, որ աֆղանական կառավարական զորքերն իմենաթիոները ռմբակոծել են Ճալալաբադ քաղաքը, սպանելով 12 և վիրավորելով 50 հոգու: Անցյալ շաբաթ Ճալիբանի ոստիկանության ապստամբները գրավել էին այդ արևելյան քաղաքը: Երջակա տարածքների վերահսկողության համար մղվող կռիվները շարունակվում են:

ՖԻՐՄԱՅԻՆ ԽԱՆՈՒԹԸ

առաջարկում է հյուսիսային ամերիկյան՝ եվ Կանադայի հանրահանրաչ ֆիրմաների արտադրության սիգարետների լայն ընտրանի, ինչպես նաև «Բիգ Բեն» եվ «Անֆորա» ֆիրմաների արտադրության ծխախոտներ եվ թութունների:

Առաջարկվում են նաև ամերիկյան «Զիպպո» (Zippo) ֆիրմայի բրելոկներ եվ նրանց դիմահեղյուսներ:

Զանազան են նաև ավելի քան 190 տեսակի աշխարհում լավ հայտնի ֆիրմաների սիգարետներ:

Ընդունվում են անհատական պատվերներ: Առաջարկը ավելանում է ամեն օր, ժամը 9-21-ը՝ առանց ընդմիջման

BIG BEN

ANFORA

Հասցեն Սարյան փող 1 հեռ. 56-03-11

NESTLE

Ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչը իր պահեստներից մատչելի գնով առաջարկում է

Nuts, Lion, Kit Kat, Nescafe, եվ "Nestle" ֆիրմայի այլ արտադրանք:

Դիմել՝ Վահրամ Փափազյան, 26
Հեռ. 263 701

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը հայտարարում է

Մագիստրոսական ծրագրով (ուսուցման անդրանիկ ընդունելություն ներքոհիշյալ մասնագիտություններով):

- Ընդհանուր տնտեսագիտություն
- Համաշխարհային տնտեսություն եվ միջազգային տնտեսական հարաբերություններ
- Մասնավոր եվ պետական կառավարում

Մագիստրատուրա կարող են ընդունվել այն անձինք, ովքեր, որպես կանոն, «գերազանց» եվ «լավ» գնահատականներով ավարտել են բարձրագույն կրթության դասընթացը:

Ուսման տեւողությունը 2-2.5 տարի է, զինվորականի ծառայությունից տարկեսման տրամադրությամբ: Այդ ընթացքում սովորողները կարող են հանձնել նաեւ թեկնածուական մինիմումի քննություններ:

Մրցութային ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերի եվ հարցազրույցի հիման վրա: Դիմորդների փաստաթղթերի ընդունումը ավարտվում է սեպտեմբերի 20-ին: Ընդունվածները հրամանագրվում են սեպտեմբերի 25-ին:

Ուսման տարեկան վճարը նվազագույն աշխատավարձի 520-պատիկը:

ԵՊՀ, Այգեձորի մասնաճյուղ, տնտեսագիտության ֆակուլտետ, հեռ. 22 87 37

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շամիրամ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը սեպտեմբերի 20-ին, ժամը 12-ին Հանրապետության հրապարակում սկսում է «Լեռնն իմ նախագահն է» հանրահավաք-երթը:

Կարգախոսներն են՝

Լեռնն իմ նախագահն է
Նախագահը նախագահ
Լեռնը հաղթանակի նախագահ, տեր եղիր հաղթանակիդ
Մեր եւ միություն
Կայուն պետություն, կայուն ընտանիք
Հայաստանն իմ տունն է
Կանայք տեր են իրենց երկրին ու նախագահին
Հաղթանակած ազգին հաղթանակած նախագահ
Ազգերի մեծ ընտանիքին ներկայանալի նախագահ
Լեռնն աշխարհի առջեւ մեր ժպիտն է

Միացեք՝ մ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան Ավան թաղամասում, Նարեկացի 36, բն. 28, (ունիվերսամի մոտ):

Հեռ. 23.52.77

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան, ապրողականով, Վրացական փողոցում

Հեռ. 25-11-87, 58-18-41

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան 5 հարկանի տան չորրորդ հարկում, Դեմիրճյան փողոց:

Հեռախոս 58-18-41

ԱՅԱՔՍ

ՍՊ ընկերություն

հրավիրում է Ձեզ սեպտեմբերի 23-ից 27-ը կատարել անմոռանալի ճանապարհորդություն

ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹՈՎ

ԵՐԵՎԱՆ-ՎԱՐՇԱՎԱ-ԵՐԵՎԱՆ

Սնունդը՝ օրը 2 անգամ:

Անմոռանալի եւ շքեղ ուղեւորություն

Օգտվեք

«ԱՅԱՔՍ» ՍՊԸ ցանկանում է Ձեզ հաճելի ճանապարհորդություն

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43 Ա, ՀԵՌ. 53-15-73, 53-88-45

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ծեռնարկությունների *առաջարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Պարտություն» հասարակության երթուղի, երեսաշ-23. Խմբագրված 2 հրատարակված թիվ 65. Դասել 59143. Պատվեր 2185. Տիրաժանվել 4000. Ստորագրված է տպագրության 16.09.1996. Գինը 75 դրամ